

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ)  
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ  
ԹԵՄԱՆԵՐ (2013-2015թթ.)**

N	Թեմայի վերնագիր	Կազմակերպություն	Ղեկավարի Ա.Ա.Հ	Անոտացիա
1	Խաղողի միջվազային տարածության մշակության մեքենայի արտադրական փորձարկումների անցկացում և նախապատրաստում արտադրության մեջ ներդրման համար	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ	Թարվերդյան Արշալույս Պողոսի	<p>Խաղողագործությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության համար ունի ռազմավարական նշանակություն: Այդուհանդերձ, դրա բարձր աշխատատարությունը և մեքենայացման համալիրի բացակայությունը լուրջ խոչընդոտ են հանդիսանում ՀՀ-ում ճյուղի հետագա զարգացման և միջազգային չափանիշներին համապատասխանող բարձրորակ արտադրանքի ստացման համար:</p> <p>Հաշվի առնելով միջվազային տարածության մշակության ժամանակակից, համընթաց շարժման գործողության սկզբունքով աշխատող մեքենաների հետագա կատարելագործման սպառված վիճակը, մշակել ռոտորային սկզբունքով աշխատող ուղղաձիգ պտտման առանցքով միջվազային մշակության մեքենա:</p>
2	Բիոզանգվածային վառելիքային բրիկետների ստացման նոր տեխնոլոգիա և սարքավորում	«Բարվա ինովացիոն կենտրոն» ՍՊԸ	Վարդանյան Արամ Համբարձումի	<p>Նախագծի նպատակն է, հիմնվելով նախնական գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների վրա, կատարելագործել տեխնոլոգիան և մշակել սարքավորում՝ ապահովելով փայտին և քարածուխին տեխնիկական բնութագրերով ամբողջովին փոխարինող և գնի տեսակետից շահավետ վառելիքային բիոզանգվածային բրիկետների արտադրական գործընթաց:</p> <p>Համապատասխան մարկետինգային ստրատեգիայի դեպքում առաջարկված տեխնոլոգիայով և սարքավորմամբ արտադրվող բիոզանգվածային բրիկետները կարճ ժամանակահատվածում կունենան իրենց կայուն նիշան հանրապետության վառելիքային շուկայում:</p>
3	Համապիտանի օդաթողման և օդատրման սարք	«Երևանի ճարտարապետության և շինարարության նպետական համալսարան» ՊՈԱԿ	Մարգարյան Ալբերտ Յախշիբեկի	<p>Ճնշման խողովակաշարերում գոյացող օդային կուտակումները կարող են առաջանալ զանազան պատճառներով, որոնցից առավել վտանգավորը ջրատարի գլխամասում գետի ելքի կտրուկ նվազումն է: Եթե խողովակաշարը չունի կառավարման ավտոմատ գործողության համակարգ, ապա դրա գլխամասից օդը թափանցում է ջրատարի մեջ ու գցում վերջինիս թողունակությունը: Ջրատարի գլխամասում գետի ելք վերականգնվելիս ջրատարն այլևս չի ընդունում ավելի մեծ ելք, քանի որ օդահան սարքերն ի վիճակի չեն մեծ քանակի օդը բավարար ժամանակամիջոցում խողովակից հանել մթնոլորտ:</p> <p>Առաջարկվող սարքը, որը կրում է համապիտանի օդաթողման և օդահանման սարք անվանումը կատարում է հետևյալ երեք գործառույթները՝</p>

				<ol style="list-style-type: none"> <li>1. փոքր քանակի օդահան սարքով շահագործողական վանտուզ, ջրատարն օդային կուտակումներից ազատելու համար,</li> <li>2. մեծ քանակի օդահան սարքով, խողովակաշարի լցման գործընթացն արագացնելու համար և շահագործման ընթացքում առաջացող փոփոխական ռեժիմների դեպքում ներթողնված օդի հեռացման համար,</li> <li>3. մեծ քանակի օդատրման սարքով վթարի և դատարկման գործընթացում ճնշման գերնսորացումից խողովակը գերծ պահելու համար:</li> </ol> <p>Նախագծի իրականացման համար առկա են անհրաժեշտ պայմաններ: Ակ. Եղիազարովի անվան ինստիտուտի գիտական կենտրոնի հիդրավլիկական հետազոտությունների լաբորատորիայում նախատեսվում է կառուցել ջրատարի մոդել, որի սիֆոնային տեղամասի վրա կատարվելու է ՍԱԲ-ի լաբորատոր փորձարկումը, իսկ Հերմոն-Ելփին ինքնահոս ճնշումային ջրատարի փականային կայանի վերնամասի սիֆոնային տեղամասի վրա՝ բնօրինակային փորձարկում: Խմբի կազմում ընդգրկված են բազմափորձ ինժեներ-կոստրուկտորներ և հիդրավլիկայի և հիդրոտեխնիկական կառուցվածքների ոլորտի երիտասարդ տ.գ. թեկնածուներ, որոնց գիտական աշխատանքները սերտորեն կապված են նախագծի թեմային:</p>
4	Հոսանքահարումից պաշտպանիչ սարքի մշակումը	«Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (Պոլիտեխնիկ)» ՊՈԱԿ	Բաղդասարյա ն Մարինկա Քաջիկի	<p>Առաջարկվում է մշակել շինարարությունում, գյուղատնտեսությունում, բաց հանքերում, ենթակայանի կառավարման համակարգերում, բնակելի տներում, օֆիսներում օգտագործվող միաֆազ կամ եռաֆազ լարման աղբյուրից սնվող էլեկտրասարքավորումների անվտանգ շահագործումն ապահովվող պաշտպանիչ սարք և պատրաստել դրա արտադրականին մոտ նմուշը՝ դրանով իսկ ստեղծելով սարքի ներդրմանը միտված միջավայր:</p> <p>Առաջարկվող հոսանքահարումից պաշտպանիչ սարք. հոսանքահարման վտանգի դեպքում անմիջականորեն կհոսանքազրկի էլեկտրասարքավորումը և միաժամանակ վտանգի մասին կազդարարվի ձայնային/լուսային ազդանշանով:</p>
5	Նոր սկզբունքով աշխատող քարի կտրման հաստոցի լավարկումը և փորձնական նախատիպի պատրաստումը	«Էներգետիկայի բնապահպանական պրոբլեմների» ԳՀԻ	Բարսեղյան Ռազմիկ Նահապետի	<p>Նախատեսվում է իրականացնել տեսական և փորձնական հետազոտություններ նոր սկզբունքով աշխատող քարի կտրման հաստոցի լավարկման, ինչպես նաև նրա նախատիպի պատրաստման և փորձարկման համար:</p> <p>Վերլուծվելու է նաև համապատասխան շուկայի արդի վիճակը և նախապատրաստվելու են հաստոցի տեխնիկա-նախագծային փաստաթղթերը:</p> <p>Առաջարկվող հաստոցները տեխնիկա-տնտեսական գերադասելի ցուցանիշների շնորհիվ կարող են արդյունավետորեն կիրառվել բնական քարերի արդյունահանման և մշակման արտադրական ձեռնարկություններում:</p>

6	Իմունախթանիչ հակավիրուսային պատրաստուկի պիրտային արտադրության տեխնոլոգիա	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	Հակոբյան Ժան Իշխանի	Առաջարկվում է նոր, հակավիրուսային պատրաստուկի՝ ինտերֆերոնի ինդուկտորի արտադրության տեխնոլոգիա՝ գյուղատնտեսական կենդանիների վիրուսային հիվանդությունների (դաբաղի և թռչունների Նյու-Քասլի) կանխարգելման համար:
7	Ճնշման տվիչներում օգտագործելու համար պլատինից բարակ թաղանթային ջերմաստիճանային տվիչների նախագծում և ստացման տեխնոլոգիական պրոցեսների մշակում	«Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ	Մարկոսյան Մհեր Վարդգեսի	Տվիչները ժամանակակից տեխնիկայում հանդիսանում են արագ զարգացող և մեծ կիրառություն ունեցող ուղղություններից: Ճշգրտություն, արագագործություն, երկարակեցություն, հուսալիություն և շահավետություն- սրանք են այն առանցքային բնութագրերը, որոնք ներկայացնում են տվիչները ժամանակակից շուկայում, այդ թվում նաև ճնշման և ջերմաստիճանային տվիչներին: Ջերմաստիճանը, որպես կարևոր ֆիզիկական մեծություն, հանդիսանում է որոշիչ պարամետր տարբեր տեխնոլոգիական պրոցեսներում: Հետևաբար ջերմաստիճանի ճիշտ որոշումը և վերահսկումն ունի մեծ նշանակություն տեխնիկայի տարբեր բնագավառներում: Ջերմաստիճանի չափման ճիշտ արդյունքների ստացման համար օգտագործվում են պլատինից բարակ թաղանթային ջերմաստիճանային տվիչները: Դրանք հանդիսանում են շատ կայուն և ճշգրիտ սարքեր, որոնք աշխատում են լայն ջերմաստիճանային տիրույթում (-200 °C ÷ 1000 °C) և օգտագործվում են այնտեղ, որտեղ պահանջվում է չափումների լավ կրկնելիություն և բարձր ճշգրտություն: Գոյություն ունեն տարբեր ջերմաստիճանային տվիչներ, բայց այսօր կարևորվում է դրանց համալիր համատեղումը այլ տվիչների հետ, օրինակ՝ ճնշման տվիչների, որոնք աշխատում են ագրեսիվ պայմաններում և որտեղ ճնշման փոփոխությունը կարող է կապված լինել ջերմաստիճանի փոփոխության հետ: Այդ առումով համալիր տվիչների նախագծումը և դրանց արտադրման տեխնոլոգիական պրոցեսների մշակումը հանդիսանում է արդիական խնդիր: Համալիր օգտագործման դեպքում կարևոր է բացառել տարբեր տվիչների փոխազդեցությունը, հաշվի առնելով պատրաստման միևնույն տեխնոլոգիաների օգտագործումը:
8	Հեռահաղորդող էլեկտրակարգիչ գրաֆների ներդրումը Հայաստանում	ՀՀ ԳԱԱ «Լ.Ա.Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ» ՊՈԱԿ	Սարգսյան Ռաֆիկ Շավարշի	Առաջարկվող ծրագրի գլխավոր նպատակը հանդիսանում է 3 մուտքային Հոլտեր տիպի կարդիոգրաֆի առևտրային նախատիպի նախագծումը և մշակումը՝ ունակ 48 ժամվա ընթացքում անցկացնել մարդու կարդիոգրամայի գրանցում՝ ազատ գործունեության պայմաններում: Մշակվող նախատիպում նախատեսվում է գրանցված տվյալների փոխանցումը բժշկին հեռահաղորդակցական կապի միջոցով: Ծրագրի մասնակիցների կողմից արդեն մշակվել էին տարբեր ժամանակից կենսաբժշկական սարքավորումներ, այդ թվում 12-մուտքային մասնագիտացված կարդիոգրաֆներ, և կարելի է հուսալ, որ մշակվող կարդիոգրաֆները չեն զիջի իրենց տեխնիկական ցուցանիշներով

				արտասահմանյան անալոգներին, իսկ արժեքը՝ 2 անգամ ավելի ցածր կլինի արտերկրյա նմանատիպ սարքերից: Առաջարկվող ծրագրի մյուս նպատակն է հանդիսանում օրգանիզմի կարդիոգրամայի ամպլիտուդա-ժամանակային պարամետրերի մի վրա՝ մի շարք ախտաբանական վիճակների ազդեցության առանձնահատկությունների բացահայտման հետ կապված գիտական հետազոտությունների անցկացումը: Այսպիսի հետազոտությունների արդյունքները կարող են հանգեցնել կարևոր ախտորոշիչ կարդիոլոգիական չափանիշների բացահայտմանը, որոնք կօգտագործվեն մարդկանց տարբեր հիվանդությունների վաղ բացահայտմանը:
9	Անօդաչու թռչող ապարատների ադապտիվ ինքնաղեկասարգի և բարձր ճշտության գիրոկայունացված հարթակի մշակումը և լաբորատոր նմուշի պատրաստումը	«Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (Պոլիտեխնիկ)» ՊՈԱԿ	Գասպարյան Օլեգ Նիկոլայի	Փոքր անօդաչու թռչող ապարատները (ԱԹԱ) ունեն լայն կիրառություն ռազմական և տարբեր քաղաքացիական ոլորտներում: ԱԹԱ-ի կենտրոնական հանգույցն է հանդիսանում ինքնաղեկասարքը (ավտոպիլոտը), որը տարբեր տեսակի տվիչների և GPS (կամ GLONASS) արբանյակային նավիգացիոն համակարգի ազդանշանների հիման վրա գնահատում է ԱԹԱ-ի ընթացիկ դիրքն ու կողմնորոշումը և հաշվարկում է համապատասխան կառավարող ազդանշաններ: Նշանակետի հսկումը սովորաբար կատարվում է տեսախցիկով, որը տեղադրված է երկու ազատության աստիճան ունեցող կայունացված հարթակի վրա: Նախագծի նպատակն է՝ մշակել, պատրաստել ու փորձարկել գիրոկայունացված հարթակի և ինքնաղեկասարքի միավորված ադապտիվ կառավարման համակարգի լաբորատոր նմուշ, որն իր ճշգրտության և տնտեսական ցուցանիշներով կգերազանցի համապատասխան դասին պատկանող արտասահմանյան առկա նմանակներին:
10	Ավտոնոմ ռեժիմով աշխատող, կոշտ հիշողությամբ, եռաբաղադրիչ տատանողական պրոցեսներ գրանցող սարք	ՀՀ ԳԱԱ «Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ	Հովհաննիսյան Սևադա Մկրտչի	Սարքը նախատեսված է տատանողական պրոցեսները գրանցելու և հիշելու համար: Բացի տատանումների գրանցումներից, այն գրանցելու է նաև իրականացված պրոցեսի ամսաթիվը (օր, ամիս, տարի), ժամը, րոպեն, վայրկյանը իր հարյուրերորդական մասերով, այդ ամենը պահպանելով կոշտ հիշողության մեջ: Սարքն ունենալու է USB ելք՝ կոշտ հիշողության մեջ պահպանված ինֆորմացիան ստանալու համար: Ժամանակային տվյալների մուտքագրումը կիրականացվի սարքի վրա գտնվող կառավարման վահանակից: Սարքի սնուցումը կիրականացվի 6 վոլտ լարման աղբյուրից, փոքրածավալ ակումուլյատորային մարտկոցից: Սարքը կապահովվի ծրագրային մասով իրեն համապատասխան բացատրագրով:

11	Գյուղատնտեսական թունաքիմիկատների միկրո-էմուլսիոն և միկրո-սուսպենզիոն պատրաստուկային ձևերի ստեղծման տեխնոլոգիայի մշակում և նմուշների պատրաստում	«Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (Պոլիտեխնիկ)» ՊՈԱԿ	Միքայելյան Արամ Ռազմիկի	<p>Գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի ժամանակակից միջոցների ստեղծման կարևոր ուղղություններից է օրգանական լուծիչներ չպարունակող (կամ դրանց մինիմալ պարունակությամբ) պատրաստուկային ձևերի մշակումը: Առաջարկվող նախագծի նպատակն է մի շարք ինսեկտիցիդային ակտիվությամբ նյութերի հիման վրա (իմիդակլոպրիդ, ցիպերմետրին, քլորպիրիֆոս) ստեղծել ջրային հենքով, բարելավված ցուցանիշներով միկրո-էմուլսիոն, միկրո-սուսպենզիոն պատրաստուկային ձևեր, մշակել դրանց ստացման տեխնոլոգիան և կազմակերպել փորձնական արտադրություն: Նախատեսվում է նաև.</p> <ul style="list-style-type: none"> <li>- տեղական հումքի և արտադրությունների թափոնների հիման վրա մշակել կենսաքայքայման ենթարկվող հավելանյութերի սինթեզի մատչելի եղանակներ և տեխնոլոգիաներ</li> <li>- բավարար կայուն պատրաստուկային ձևերի համար իրականացնել թունաբանահիգիենիկ հետազոտություններ և դաշտային փորձարկումներ ՀՀ տարբեր բնակլիմայական գոտիներում</li> <li>- կազմել փաստաթղթային փաթեթ պետական գրանցում ստանալու համար:</li> </ul>
12	Տեխնոլոգիական պրոցեսների մշակումը արագացուցչային տեխնիկայի ճշգրիտ հանգույցներ պատրաստելու համար	«ՔԵՆԴԼ» սինթրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ	Ավագյան Վարդան Շավարշի	<p>AREAL ճշգրիտ գծային արագացուցիչի նախագծի իրականացման ժամանակ CANDLE ինստիտուտ նախագծվել և պատրաստվել են մի շարք հանգույցներ և ռադիո ֆիզիկական սարքավորումներ՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- մագնիսական սիստեմներ,</li> <li>- ճշգրիտ կարգավորվող հարմարանքներ,</li> <li>- գերբարձր վակուումային հարմակարգ, վակուումային խցիկ,</li> <li>- բարձր ճշտություն ունեցող հովացման համակարգեր,</li> <li>- բարձր հաճախականության համակարգի հանգույցներ և այլն:</li> </ul> <p>Անհրաժեշտություն առաջացավ վերը նշված տեխնոլոգիական պրոցեսներից բացի մշակել մետաղակերամիկական միացման տեխնոլոգիա, որը լայն կիրառություն ունի ժամանակակից գիտությունում և տեխնիկայում, հատկապես էլեկտրոնային տեխնիկայում, արագացուցչային, ատոմային և քիմիական մեքենաշինություններում:</p> <p>Մետաղակերամիկական հանգույցները պետք է ապահովեն բարձր մեխանիկական և էլեկտրական ամրություն, բարձր ջերմաստիճանում և տարբեր միջավայրերում ջերմակայունություն, վակուումային հերմետիկություն, քիմիական և ռադիոակտիվային կայունություն:</p>

13	<p>Երեք առանցքներով տատանումներ գրանցող սեյսմիկ դետեկտոր, որը գործելու է աննախադեպ լայն հնարավորություններ ընձեռնող <b>sfco</b> նոր տվիչի հիման վրա</p>	<p>«Փի Էս Այ» Ճշգրիտ տվիչներ-սարքավորումներ մշակող և արտադրող» ՍՊԸ</p>	<p>Գևորգյան Սամվել Գերասիմի</p>	<p>Ունենալով իր հիմքում հարթ ընդունող կոճով, թույլ հզորությամբ ինքնագեներատորը՝ մեր «<u>տեխնոլոգիան</u>» (a <u>single-layer flat-coil-oscillator method – SFCO-technology</u>) թույլ է տալիս ստեղծել <u>նանոչափսերի տեղափոխություններ գրանցող նոր դասի տվիչներ</u>։</p> <p>Դրանք կիրառություն կգտնեն սեյսմոմետրերում՝ որպես <u>աննախադեպ լայն հաճախային տիրույթում</u> («Օ» Հց-ից սկսած) ազդանշան «որսացող» ավելի զգայուն <u>տվիչներ</u> – երկրաշարժերին նախորդող երկրակեղևի <u>քվազի</u>-ստացիոնար տեղափոխությունները բացահայտելու համար։ Դրանց կարելի է օգտագործել նաև ցունամիի հայտնաբերման համար, մակընթացությունը դիտելիս, կոնստրուկցիաների ու շենքերի <u>քվազի</u>-ստացիոնար ծոմովելուն հետևելիս, ինչպես նաև կամուրջների ծայրահեղ դանդաղ «ծերանալը» բացահայտելու նպատակով։</p> <p>Նախագծի շրջանակներում <u>նախատեսվում է այդպիսի SFCO սենսորների հիման վրա մշակել և ստեղծել 3 ուղղություններով տատանումներ գրանցող /«վեկտորային»/ սեյսմիկ դետեկտոր, օպտիմացնել նրա կոնստրուկցիան ու էլեկտրոնիկան, ու նաև չափել նրա տատանողական և ՌՀ բնութագրերը</u>։ Այն պիտի կարողանա բացահայտել գետնի ինչպես սովորական /1-100Հց/, այնպես էլ դանդաղ /0.01-1Հց/ շարժումները, և «ունակ» լինի «զգալ» ու գրանցել մարդու քայլերը ռեկորդային մեծ (100-200 մ) տարածությունից /կախված հողի բաղադրությունից ու կառուցվածքից/ և կարողանա միանալ միջազգային IRIS սեյսմիկ ցանցին։</p> <p><u>Նպատակ կա նաև ստեղծել ու փորձարկել 5 այդպիսի դետեկտորներից եկող ազդանշանների հաճախություններն արագ չափող մոդուլ, որը նախատեսված է այդ ազդանշանների հաճախությունները 15 առանձին մուտքերով /3-ական ազդանշան 5 տարբեր դետեկտորներից/ միաժամանակ չափելու համար՝ 0.1-1.5ՄՀց տիրույթում, ±10Հց-ից լավ ճշտությամբ /յուր. կանալով 10<sup>3</sup> չափում վայրկյանում/։</u></p> <p>Չափման տվյալները «RS422» կամ «USB» կապով այնուհետև պետք է փոխանցվեն համակարգչին՝ հետագա մշակման համար։</p>
14	<p>Պլազմայի ռադիո հաճախային իմպեդանսի բարձր հզորության արագագործ համաձայնեցնող համակարգ</p>	<p>ՀՀ ԳԱԱ «Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ</p>	<p>Հախումյան Արսեն Ալեքսանդրի</p>	<p>Նյութերի մշակումը պլազմայի միջոցով լայնորեն օգտագործվում է արդի բազմաթիվ տեխնոլոգիական համակարգերում, հատկապես կիսահաղոցային արդյունաբերությունում (փարագրում եւ նստեցում), որտեղ արդյունաբերական կրկնելիության և որակը ապահովման տեսակետից պլազմայի համաձայնեցումն ունի կենսական նշանակություն։ Պլազմայի իմպեդանսը հատկապես մեծ հզորությունների դեպքում օժտված է խիստ պարամետրիկ ոչ-գծայինությամբ։ Ի տարբերություն գծային շղթաների, օրինակ անտենայի համաձայնեցմանը, խախտվում է փոխադարձ միարժեքությունը և համաձայնեցման ուղին կախված է սկզբնական կետից։ Այսպիսով, այս խնդիրը էապես ոչ-գծային և բազմափոփոխական կառավարման խնդիր է։ Խնդիրը ավելի է բարդանում արդի տեխնոլոգիայի կողմից թելադրվող բարձր հզորության իմպլսային ռեժիմներում,</p>

				<p>ինչը բացառում է լայն կիրառություն գտած էլեկտրա-մեխանիկական համաձայնեցնող սարքերի օգտագործումը: Առաջարկվում է կառուցել հզոր արագագործ PIN դիոդների հիման վրա 10 բիթանի փոխանջատվող իմպեդանսների մատրիցա, եւ կառավարվում է պլազմային խցիկի անդրադարձման կոմպլեքս տվյալներով, որոնք ստացվում են I-V տվիչների միջոցով:</p>
15	<p>ՀՀ Սյունիքի մարզի Կապան, Սիսիան, Գորիս քաղաքների սեյսմիկ ռիսկի գնահատում</p>	<p>ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ</p>	<p>Կարախանյան Արկադի Ստեփանի</p>	<p>Ծրագրի հիմնական նպատակն է կիրառության մեջ ներդնել Սյունիքի մարզի Կապան, Սիսիան, Գորիս քաղաքների սեյսմիկ ռիսկի գնահատման արդյունքները: Նշված քաղաքների համար կմշակվեն երկրաշարժերի սցենարներ՝ հնարավոր ուժեղ երկրաշարժերի վտանգը և կապակցված ռիսկը, քաղաքների սահմաններում սպասվող կորուստները գնահատելու համար:</p> <p>Նշված յուրաքանչյուր քաղաքի երկրաշարժի սցենարին ուղղված աշխատանքները բաղկացած կլինեն հետևյալ քայլերի հաջորդականությունից. սեյսմիկ վտանգի հավանականային և դետերմինիստական գնահատում; երկրաշարժերի սցենարների ընտրություն՝ հիմնված սեյսմոտեկտոնական մոդելի և դեագրեգացիայի վրա; ընտրված յուրաքանչյուր սցենարի դեպքում նշված քաղաքների սեյսմիկ ռիսկի հաշվարկ:</p> <p>Այս ծրագրի շրջանակներում կուսումնասիրվեն և կքարտեզագրվեն սեյսմիկ վտանգի այնպիսի պարամետրեր, ինչպիսիք են գրունտի առավելագույն հորիզոնական արագացումների և սպեկտրալ արագացումների արժեքները, գրունտի դասակարգումը համապատասխան ՀՀ ՇՆ 2006թ սեյսմակայուն շինարարության նորմեր նորմատիվային փաստաթղթի: Արդյունքում այս քարտեզները և արժեքները մուտքային տվյալներ կհանդիսանան ռիսկի հաշվարկներում: Ռիսկը կգնահատվի հաշվի առնելով սեյսմիկ, երկրորդական երկրաբանական, անթրոպոգեն և խոցելիության ազդեցությունների հանրագումարը: Յուրաքանչյուր երկրաշարժի սցենարի դեպքում այս հաշվարկները իրենց մեջ կներառեն ընտրված քաղաքների, վնասների և կորուստների բոլոր հնարավոր տարբերակները:</p> <p>Ծրագրի իրականացման ընթացքում լայնամասշտաբ կիրառություն կունենան հեռահար զոնդավորման և GIS համակարգը, մշակման և վերլուծության բարելավված տեխնոլոգիաները:</p> <p>Ծրագրի արդյունքները և նրանց ներդրումը անհրաժեշտ են համապատասխան նախարարություններին, քաղաքապետարաններին, արտակարգ իրավիճակներում որոշում կայացողներին՝ աղետներին դիմակայման, գործողությունների պլանավորման, աղետների ռիսկի նվազեցման բազմաթիվ խնդիրների լուծման համար:</p> <p>Ստեղծված բազմապրոֆիլային տվյալների շտեմարանները, ինչպես նաև վերը նշված քարտեզներն ու աղյուսակները, ըստ հետազոտվող քաղաքների, մեծ</p>

				առևտրային հետաքրքրություն կներկայացնեն բանկերի, ապահովագրական ընկերությունների, քաղաքաշինական, հաղորդակցության և ենթակառուցվածքներով զբաղվող ընկերությունների համար:
16	Որոտան-Գորիս դիատոմիտաբեր ավազանի ֆոսֆորիտային ապարները և նրանց օգտագործման հնարավորությունները որպես ֆոսֆորային պարարտանյութեր	ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ ՊՈԱԿ	Ավազյան Թոռնիկ Արսենի	<p>Նախագծի նպատակն է երկրաբանա-որոնողական կոմպլեքս աշխատանքների և անալիտիկ ուսումնասիրությունների միջոցով Հայաստանի Հանրապետության տարածքում անջատել տնտեսապես էֆեկտիվ և էկոլոգիական պահանջներին բավարարող ֆոսֆորիտաբեր զոնաներ, որոնց մեջ գտնվող ֆոսֆորիտաբեր ապարները իրենց ագրոքիմիական հատկություններով և պաշարներով որոշակիորեն կբավարարեն ֆոսֆորային պարարտանյութերի պահանջարկը Հայաստանում և տարածաշրջանում:</p> <p>Հայաստանի տարածքում մինչ այժմ հայտնի ֆոսֆորիտաբեր զոնաներում առկա են խանգարող հանգամանքներ, որոնք հնարավորություն չեն տալիս լիարժեք կերպով օգտագործելու այդ շերտերը:</p> <p>Մեր կողմից հայտնաբերված ֆոսֆորիտաբեր զոնաները, որոնք գտնվում են Որոտան-Գորիս դիատոմիտաբեր ավազանում, ունեն մի շարք առավելություններ.</p> <ul style="list-style-type: none"> <li>• նստվածքները երիտասարդ հասակի են, հիմնականում ունեն հորիզոնական տեղադրում;</li> <li>• ներփակող ապարները և ֆոսֆորիտային մարմինները ունեն բիոգեն ծագում;</li> <li>• ֆոսֆորիտային ապարները հեշտ մշակվող են, ենթարկվում են հեշտ հարստացման;</li> <li>• ներկայացված նմուշներում բույսերի կողմից P<sub>2</sub>O<sub>5</sub>-ի կլանման քանակները լիովին բավարարում են պարարտանյութ օգտագործելու պահանջներին;</li> <li>• նախնական հարստացման մեթոդով ստացվել են բարձր տոկոս (19.5- 33,5) պարունակող P<sub>2</sub>O<sub>5</sub> պարարտանյութեր;</li> <li>• պաշարների ծավալը բավականաչափ են պարարտանյութերի արտադրության ծավալման համար:</li> </ul> <p>Նախագծի հիմնական նպատակի իրագործման համար անհրաժեշտ է կատարել դաշտային աշխատանքներ, անալիտիկ և ագրոքիմիական ուսումնասիրություններ, ինչպես նաև փորձարարական աշխատանքներ, կապված հարստացման ամենաէֆեկտիվ տեխնոլոգիան ստանալու համար, տարբեր ցանքատարածքներում ստուգելու ստացված P<sub>2</sub>O<sub>5</sub> կոնցենտրատի ազդեցությունը բույսերի աճի, բերքատվության և քիմիական կազմի վրա:</p>
17	Միջին և փոքրատոննաժ 50-ից ավելի օրգանական քիմիական միացությունների	Կիրառական քիմիայի ինստիտուտ «Արիակ» փակ բաժնետիրակա	Հասրաթյան Գագիկ Վաչեյի	Ազոտ պարունակող N-ալկիլ-N-օքսիդները գիտահետազոտական ոլորտում վերջին տարիներին ծավալվող օգտագործում են ցուցաբերում որպես օքսիդացման համակատալիզատորներ ստերեոսելեկտիվ սինթեզներում :Այդ շարքում տարբեր (մի քանի տասնյակ) N-օքսիդների հետ մեկտեղ N-մեթիլմորֆոլին N-օքսիդը, այսուհետև ՄՄՕ-որպես համակատալիզատոր բավականին լայն ուսումնասիրվել է և հավանական է մոտ ժամանակում տեխնոլոգիական պրոցեսներում լուրջ ծավալի

<p>սինթեզման ունիվերսալ բլոկ-մոդուլային տեխնոլոգիայի մշակում և պիլոտային կայանքի ստեղծում</p>	<p>ն ընկերություն</p>	<p>հաստատուն պահանջարկ կունենա: Օրինակ (նայիր կից սխեման): ՄՄՕ-ի օգտագործումը թույլ է տալիս տարբեր չհագեցած միացություններից բարձր ելքերով ստանալ ստերեոսպեցիֆիկ օքսիմիացություններ, որոնք լավ “շինարարական” մատերիալ են ստերոիդների սինթեզի համար, որոնց պահանջը աշխարհում ստաբիլ աճ է դրսևորում:</p> <p>ՄՄՕ-ի հիման վրա ստեղծվել են տարբեր թափանցիկության Խեմոդիալիզային, պղինձ-ամիակային մեմբրաններ, երկկամների անբավարարությամբ տառապող հիվանդներին օգնելու համար (Y.Appl.Polim.Sci,2003. 89,N° 2,c 333-339 Англ.):</p> <p>Դրանով չի ավարտվում ՄՄՕ-ի օգտագործման ասպարեզը:</p> <p>Վերջին ժամանակներում հայտնաբերվեց մի շատ կարևոր հատկություն: ՄՄՕ-ի նրա բարձր պոլյարության շնորհիվ կարողացան լուծել բնական պոլիմեր ցելուլյոզան:</p> <p>Շարադրածին ավելացնենք, որ ՄՄՕ-ն օգտագործվելուց հետո վերականգնվում է առանց քայքայման մնացորդների և կարող է նորից օգտագործվել (Рос.хим.ж.2002г. т XLVI № 1), ապա ՄՄՕ-ի արտադրությունը զարգացնելու գաղափարը դառնում է անվիճելի:</p> <p>Այսպիսով կարևոր ենք համարում նշել, որ ՄՄՕ-ն և N-ալկիլ-N-օքսիդները կարևոր միացություններ են հանդիսանում հիմնարար խնդիրներն ուսումնասիրելու համար և լուրջ առևտրայնացման պոտենցիալ են պարունակում: Այդ նյութերի յուրահատկությունները, որոնք կապված են մոլեկուլի գերպոլյարության հետ, ակնհայտ են դարձնում գիտահետազոտական աշխատանքները նոր ռեակցիաներ ուսումնասիրելու ուղղությամբ, որտեղ որոշիչ է լինելու սելեկտիվ օքսիդացման պրոցեսների մշակումը և մոդելավորումը: Զուգահեռ լուծելով նրա ստացման տեխնոլոգիայի մշակումը և ներդրումը, դրա հետ մեկտեղ իհարկե կարևոր է ընտրել հետազոտվող օբյեկտների դասը:</p> <p>Մեկ ուրիշ կարևոր ոլորտ է կրակա և ջերմակայուն նոր մատերիալները, որոնց հենքում մենք տեսնում ենք ալիլֆտալաթթուների և ցիկլոտրիֆոֆազենների պրոպարգիլ եթերները:</p> <p>Այս նմուշներից ստացված կապակցվող օլիգոմեռների և միացությունների բարձրամոլեկուլյար նմուշները բացահայտելով 400°C ավելի ջերմակայունություն հիմնավորում են պրոցեսի մասշտաբավորումը բլոկ-մոդուլային կայանքի օգնությամբ ստանալով բավարար քանակի տեսականի և ստեղծել վերջնական նյութեր մասնավորապես ավիացիոն, մեքենաշինության մեջ և օդանավերի ներքին ձևավորման նպատակով:</p> <p>Աշխատանքը նախատեսվում է ծավալել նշված նյութերի քիմիայի և նրանց ստացման տեխնոլոգիաների ուղղությամբ:</p>
---	-----------------------	--